«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ վճարային քարտերի կիրառմամբ EvocaTouch բջջային հավելվածով թվայնացված քարտերով գործարքների կատարման հիմնական պայմաններ և դրույթներ

1. Սահմանումներ և եզրույթներ

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ վճարային քարտերը EvocaTouch բջջային/մոբայլ հավելվածով թվայնացված քարտերով գործարքների կատարման հիմնական պայմանների (այսուհետ՝ Պայմաններ) սույն մասում սահմանված հասկացությունները պահպանում են իրենց իմաստը՝ անկախ նրանից, թե Պայմանների որ մասում են դրանք հանդիպում, ընդ որում եզակի թվով բառերը ենթադրում են նաև հոգնակի թիվ և հակառակը:

Բանկ - «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ,
Հավելված – EvocaTouch բջջային/մոբայլ հավելված,
Հաճախորդ/Քարտապան – Բանկի ֆիզիկական անձ հանդիսացող քարտապան/հաճախորդ,
Պայմանագիր – Բանկի «Համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմաններ»-ը, ինչպես նաև «Վճարային քարտերի տրամադրման և օգտագործման պայմաններ»-ը, որոնք ակցեպտավորվել են Հաճախորդի (Քարտապանի) կողմից,
Թվային քարտ – Visa միջազգային վճարային համակարգի թվային վճարային քարտ է, որը Հաճախորդը/Քարտապանը օգտագործելու նպատակով ընտրել և պատվիրել է EvocaTouch բջջային հավելվածի միջոցով:
Աջակցող սարք – Սարքավորում (Հեռախոս, խելացի ժամացույց և այլն), որում հնարավոր է տեղադրել Հավելված և որը ունի NFC/անհպում վճարումների հանրավորություն,
NFC/անհպում վճարում – Թվային քարտը անհպում հաշվեգրող սարքին մոտեցնելու օգնությամբ առևտրի և սպասարկման կետերում ապրանքների/ծառայությունների դիմաց վճարում կատարելու նպատակով իրականացված գործողություն,
Հավաստագրման տվյալներ – Հավելված մուտք գործելու համար Հաճախորդի/Քարտապանի գաղտնաբառը, ծածկագիրը և այլ տվյալներ: Հավաստագրման տվյալները համարժեք են Հաճախորդի/Քարտապանի ստորագրությանը,
Գաղտնիության քաղաքականություն – Բանկի գաղտնիության քաղաքականություն՝ POL21-0001-17 PUB,
Վիրտուալ պատկեր – Թվային քարտի էլեկտրոնային արտապատկեր,

2. Հիմնական դրույթներ

2.1. Սույն փաստաթուղթը պարունակում է Հավելվածում Visa Թվային քարտի օգտագործումը կարգավորող պայմանները: Հաճախորդը/Քարտապանը համաձայն է, որ, ընդունելով Բանկի «Համալիր բանկային ծառայությունների մատուցման պայմաններ»-ը, ինչպես նաև «Վճարային քարտերի տրամադրման և օգտագործման պայմաններ»-ը, ընդունում է սույն Պայմանները, և որ այն հանդիսանում է Բանկի հետ կնքված վճարային քարտի տրամադրման և սպասարկման պայմանագրի անբաժանելի մաս:

2.2. Պայմանների և Պայմանագրի միջև տարընթերցումների առկայության դեպքում Վճարային ծառայությունների հանդեպ կիրառվում են Պայմանագրի դրույթները:

2.3. Սույն Պայմանները սահմանում են Հաճախորդի/Քարտապանի Թվային քարտի հասանելիության և օգտագործման պայմանները միայն Բանկի և Հաճախորդի միջև առկա հարաբերություններում:

2.4. Հավելվածում ներառված, Ծառայություն մատուցողը և այլ կողմնակի ծառայություններ մատուցողներ և կայքեր կարող են սահմանել իրենց պայմանները և դրույթները (ներառյալ Ծառայություն մատուցողի պայմանները), ինչպես նաև գաղտնիության քաղաքականությունը (Պայմանագրեր երրորդ անձանց հետ), ընդ որում Հաճախորդը/Քարտապանը վերջիններիս անձնական տվյալներ ներկայացնելիս, նրանց ծառայություններից օգտվելիս կամ համապատասխան կայքեր այցելելիս պարտավոր է կատարել երրորդ անձանց հետ այդպիսի Պայմանագրերի պայմանները:

2.5. Հաճախորդի/Քարտապանի կողմից Թվային քարտերի օգնությամբ ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը կարգավորվում է Վճարային ծառայություններից օգտվելու սույն Պայմաններով և Պայմանագրով:

3. Աշխատանքի սկզբունքը

3.1. Բանկի հետ Թվային քարտի թողարկման պայմանագիրը համարվում է կնքված Քարտապանի կողմից քարտը ակտիվացնելու պահից:

3.2. Թվային քարտի միջոցով Հաճախորդը իրականացնում է՝

3.2.1. Անհպում վճարումներ առևտրի և սպասարկման կետերի անհպում տերմինալների միջոցով,

3.2.2. Քարտային տվյալներով վճարումներ

3.2.3. Վճարումներ POS-տերմինալների միջոցով

3.2.4. Կանխիկ միջոցների ստացում Բանկի բանկոմատներից

3.3. Քարտի պատվիրումից հետո Հավելվածը գեներացնում է Թվային քարտ և Հավելվածում ձևավորում է դրա Վիրտուալ պատկեր :

3.4. Թվային քարտի օգնությամբ վճարում իրականացնելու համար Հաճախորդը/Քարտապանը, ընտրելով Հավելվածում Թվային քարտի համապատասխան Վիրտուալ պատկերը և Աջակցող սարքը մոտեցնելով առևտրային կետի անհպում հաշվարկիչ սարքին, հաստատում է գործարքը՝ մուտքագրելով Հավաստագրման տվյալները:

3.5. Հավելվածում առկա վաճառողներից գնումների իրականացման համար Հաճախորդը/Քարտապանը ընտրում է համապատասխան Թվային քարտի Վիրտուալ պատկերը և հաստատում է վճարումը՝ մուտքագրելով Հավաստագրման տվյալները:

4. Տեղեկատվության և վճարումների դիտում

4.1. Հավելվածը Հաճախորդին/Քարտապանի տրամադրում է Թվային քարտի հետ կապված տեղեկատվության հասանելիություն, այդ թվում՝

4.1.1. Քարտի կարգավիճակը՝ գործող, ժամկետի լրացմամբ պայմանավորված արգելափակված, տվյալների հափշտակման հետ կապված արգելափակված,

4.1.2. Տվյալ Թվային քարտով կատարված նախորդ վճարումներին առնչվող տեղեկատվություն՝ ամսաթիվ, գնման գումար, վաճառողի անվանում: Հավելվածն ունի յուրաքանչյուր Թվային քարտի գծով իրականացված գնումների տեղեկացման անջատման հնարավորություն:

4.2. Հավելվածը չի տրամադրում Հավելվածով չիրականացված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն:

5. Հաճախորդի իրավունքները և պարտավորությունները.

5.1. Հաճախորդը պարտավոր է՝

5.1.1. Պահպանել Ծառայություն մատուցողի պայմանները,

5.1.2. Նախքան Հավելվածում գրանցվելը համոզվել, որ Հավելվածում գրանցված են միայն իր տվյալները: Թվային քարտերի կիրառմամբ գործարքների հաստատման համար հաշվի կառնվեն միայն այդ մատնահետքերը:

5.2. Եթե Հաճախորդը օգտագործում է այլ անձնի Հավաստագրման տվյալներ, ապա դրանք կհամարվեն Հաճախորդինը:

5.3. Հաճախորդը պարտավոր է իր Հավաստագրման տվյալները պահել երրորդ անձանց համար անհասանելի վայրում:

5.4. Թվային քարտի տվյալների կամ Հավաստագրման տվյալների հափշտակման դեպքում Հաճախորդը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին:

5.5. Բանկը պատասխանատվություն չի կրում Թվային քարտի վավերապայմանների հափշտակման և/կամ Հավաստագրման տվյալների կորստի արդյունքում Բանկին չիրազեկելու և/կամ ոչ պատշաճ իրազեկելու հետևանքով Հաճախորդի հնարավոր կորուստների համար:

5.6. Հաճախորդի Թվային քարտի և Հավաստագրման տվյալների օգնությամբ իրականացված գնումները և այլ գործարքները համարվում են Հաճախորդի/Քարտապանի կողմից իրականացված գործարքներ:

5.7. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել Վճարային ծառայություններից՝ Հավելվածում փակելով Թվային քարտը:

6. Բանկի իրավունքները և պարտավորությունները

6.1. Մերժել Հաճախորդի Թվային քարտի օգտագործումը Հավելվածում, եթե խախտվել են սույն Պայմանների և Պայմանագրի դրույթները:

6.2. Արգելափակել Թվային քարտի գործողությունը և Հավելվածում դրա օգտագործումը, տալ Թվային քարտի առգրավման կարգադրություններ և ձեռնարկել դրա համար անհրաժեշտ բոլոր միջոցները, եթե՝

6.2.1. Հաճախորդը չի կատարել կամ պատշաճ չի կատարել սույն Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները,

6.2.2. Եթե առկա են Քարտի, Քարտերի կամ Թվային քարտի գծով չթույլատրված գործարքների իրականացման կասկածներ,

6.3. Բանկն ապահովում է Թվային քարտի օգտագործման հետ կապված հարցերի տեղեկատվական աջակցություն +374 10 605555 հեռախոսահամարով:

7. Պայմանագրեր երրորդ անձանց հետ

7.1. Սույն Պայմանները կիրառվում են միայն Հաճախորդի կողմից Թվային քարտի օգտագործման հետ կապված հարաբերություններում: Ծառայություն մատուցողը, Շարժական կապի օպերատորը, երրորդ անձ հանդիսացող այլ անձանց ծառայությունները և կայքերը, որոնք միացված են Հավելվածին, ունեն իրենց պայմանները (Պայմանագրեր երրորդ անձանց հետ), ընդ որում Հաճախորդը, նշած անձանց ծառայություններից օգտվելիս կամ վերջիններիս կայք այցելելիս, պարտավոր է վերջիններիս անձնական տեղեկատվություն տրամադրելիս պահպանել այդ պայմանները: Բանկը պատասխանատվություն չի կրում Ծառայություն մատուցողի կամ երրորդ անձանց կողմից մատուցվող ապրանքների և ծառայությունների աշխատանքի, անվտանգության, ճշգրտության, օրինականության, պիտանելիության կամ բովանդակության այլ ասպեկտների համար:

7.2. Նախքան Հավելվածում թվային քարտի ստեղծումը, ակտիվացումը և օգտագործումը՝ Հաճախորդը պարտավոր է ծանոթանալ երրորդ անձանց հետ կնքվող պայմանագրերի պայմաններին:

7.3. Բանկը պատասխանատվություն չի կրում, ինչպես նաև չի ցուցաբերում աջակցություն և համագործակցություն երրորդ անձանց սարքավորումների և ծրագրային ապահովումների գծով, ինչպես նաև վերջիններիս այլ ապրանքների կամ ծառայությունների համար (ներառյալ Աջակցող սարքը): Երրորդ անձանց ապրանքների և ծառայությունների գծով ցանկացած հարցերի և խնդիրների ծագման դեպքում, Հաճախորդը օգնության և աջակցություն ստանալու համար պարտավոր է ուղղակիորեն դիմել այդ անձանց: Հավելվածի օգտագործման հետ կապված Հաճախորդի մոտ հարցերի առաջացման դեպքում (բացառությամբ Թվային քարտի կիրառման), Հաճախորդը պետք է ուղղակիորեն դիմի Հավելվածի աջակցության ծառայությանը:

8. Ծառայությունների արժեքը

8.1. Թվային քարտի օգտագործման դիմաց Բանկը Հաճախորդից գանձում է վճար համաձայն Բանկի սակագների:

8.2. Հաճախորդը պետք է հաշվի առնի, որ երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերը և այլ համաձայնագրերը կարող են նախատեսել վճարներ, սահմանափակումներ կամ արգելքներ, որը կարող է անդրադառնալ ցանկացած Թվային քարտի օգտագործմանը, օրինակ՝ Շարժական կապի օպերտորի կողմից տվյալների օգտագործման կամ տեքստային հաղորդագրությունների

օգտագործման համար կիրառվող վճարները։ Հաճախորդը միանձնյա պատասխանատվություն է կրում այդպիսի վճարների կատարման, սահմանափակումների և արգելքների պահպանման համար։

9. Վեճերի լուծումը

9.1. Սույն Պայմանների առարկայի կամ Թվային քարտի հետ կապված ցանկացած վեճ կարգավորվում է Պայմանագրում նշված վեճերին վերաբերող դրույթներով։

10. Գաղտնիություն և անվտանգություն

10.1. Անձնական տեղեկատվություն՝

10.1.1. Հաճախորդը տեղյակ է և համաձայն, որ Բանկն իրավունք ունի իրականացնել անձնական, տեխնիկական և իր հետ կապված այլ տեղեկատվության հավաքագրում, մշակում և օգտագործում, որպեսզի ապահովի՝

10.1.1.1. Բանկի ծառայությունների և պրոդուկտների թարմացումը և կատարելագործումը,

10.1.1.2. Մատուցվող ծառայությունների անվտանգության ապահովումը

10.1.1.3. Զեղծարարությունների և խարդախությունների կանխարգելումը

10.1.2. Մնացած դեպքերում այդպիսի տեղեկատվության օգտագործման համար թույլտվությունը կարգավորվում է սույն Պայմաններով, Պայմանագրով և Բանկի գաղտնիության քաղաքականությամբ։

10.2. Հաճախորդի Աջակցող սարքի կորուստը, գողությունը կամ չարտոնված օգտագործումը

10.2.1. Աջակցող սարքի կորստի կամ գողության, տվյալների հափշտակությամբ օգտագործման կամ վավերապայմանների օգտագործման կամ առանց Հաճախորդի համաձայնության Հավելվածի օգտագործման դեպքում Հաճախորդը պարտավոր է նման փաստերի բացահայտումից հետո անմիջապես, բայց ոչ ավել քան Բանկի կողմից տվյալ գործարքի կատարումը հավաստող հաղորդակցությունը ստանալուց մեկ օր հետո Բանկին ներկայացնել գրավոր դիմում չարտոնված գործարքի վերաբերյալ։

10.2.2. Հավաստագրման տվյալների հափշտակության կամ հափշտակության վերաբերյալ կասկածների առաջացման դեպքում Հաճախորդը պարտավոր է անմիջապես փոխել անձնական անվտանգության տվյալները, Հավաստագրման տվյալները և համոզվել, որ Թվային քարտի և այլ անձնական տվյալների չարտոնված օգտագործումից խուսափելու համար Աջակցող սարքում գրանցված են միայն թույլատրելի մատնահետքեր։

10.3. Աջակցող սարքը փոխելիս Հաճախորդը պարտավոր է համոզվել, որ հին Աջակցող սարքում բոլոր Թվային քարտերը և անձնական տվյալները ջնջված են։ Այդ նպատակով Հաճախորդը կարող է դիմել Բանկ +374 10 605555 հեռախոսահամարով և կարգադրել հեռացնել Թվային քարտը։

10.4. Հաճախորդը պարտավոր է ցանկացած հետաքննության ժամանակ աջակցել Բանկին և ձեռնարկել միջոցներ՝ խարդախությունների կանխման կամ տվյալների հափշտակումը չթույլատրելու նպատակով։

10.5. Թվային քարտի չարտոնված օգտագործումից պաշտպանվելու նպատակով Աջակցող սարքում և/կամ Հավելվածում կարող են օգտագործվել որոշակի ֆունկցիաներ կամ անվտանգության ապահովման միջոցներ։

10.6. Նման ֆունկցիաների և գործընթացների համար պատասխանատու է միայն Ծառայություն տրամադրողը։

10.7. Հաճախորդը պարտավորվում է չանջատել այդ ֆունկցիաները և Թվային քարտերի պաշտպանության համար օգտագործել բոլոր նշված ֆունկցիաները և անվտանգության ապահովման միջոցները։

10.8. Հավելվածի գաղտնաբառերի, Հավաստագրման տվյալների և Թվային քարտերի պաշտպանությունը՝

10.8.1. Հաճախորդը պարտավոր է ապահովել անձնական անվտանգության տվյալների և Հավաստագրման տվյալների գաղտնիությունը։ Հաճախորդը պարտավոր է ապահովել դրանց

պահպանությունը, ինչպես նաև Աջակցող սարքի պահպանումը այնպես, ինչպես ապահովվում է Բանկի Քարտերի և Հաճախորդի ինքնությունը հաստատող այլ տվյալների, գաղտնաբառերի և համարների պահպանությունը:

10.8.2. Բանկը Հաճախորդին խստորեն խորհուրդ է տալիս Թվային քարտի անվտանգությանն առնչվող տեղեկությունները պահպանել մնացած տեղեկություններից առանձին, չպահել Քարտերը Աջակցող սարքի հետ միասին, բացառապես Քարտերը Հավելվածում գրանցելու դեպքերի:

10.9. Հաճախորդը պարտավոր է անհապաղ +374 10 605555 հեռախոսահամարով Բանկին տեղեկացնել այն դեպքերի վերաբերյալ, երբ՝

10.9.1. Հաճախորդը Հավելվածում չի գրանցել Քարտ, սակայն ստացել է Հավելվածում Քարտի բարեհաջող գրանցման մասին տեքստային հաղորդագրություն կամ էլեկտրոնային փոստ,

10.9.2. Առկա են այնպիսի գործարքներ, որոնց առկայությունը Աջակցող սարքում կամ քաղվածքում Հաճախորդը չի ընդունում:

11. Ֆունկցիաների դադարեցում, չեղարկում կամ փոփոխություն

11.1. Պայմանագրում նշված Հաճախորդի Քարտերի արգելափակման, դադարեցման, չեղարկման և փակման Բանկի իրավունքներից բացի Բանկն իրեն իրավունք է վերապահում ցանկացած հիմքով (հնարավորության դեպքում խելամիտ ժամկետներում տեղեկացնելով այդ մասին) դադարեցնել ցանկացած Թվային քարտի սպասարկումը և աջակցումը կամ մասնակցումը Հավելվածում: Բանկն իրավունք ունի Հաճախորդի կողմից սույն Պայմանների, Պայմանագրի կամ Ծառայություն մատուցողի պայմանների կամ երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերի պայմանների խախտման, ինչպես նաև Թվային քարտերով զեղծարարությունների կատարման կամ չարաշահման կասկածների առկայության դեպքում արգելափակել, սահմանափակել, կասեցնել կամ դադարեցնել Հաճախորդի Թվային քարտի օգտագործումը:

11.2. Ծառայություն մատուցողն իրեն իրավունք է վերապահում առանց Բանկին հղում անելու արգելափակել, սահմանափակել, կասեցնել կամ դադարեցնել Հաճախորդի Թվային քարտի օգտագործումը կամ փոխել Հավելվածի ֆունկցիաները: Հաճախորդը համաձայն է, որ նման դեպքում Բանկը պատասխանատու չէ Հաճախորդի կամ երրորդ անձանց հանդեպ:

11.3. Բանկի կողմից խարդախությունների կամ կասկածելի գործողությունների բացահայտման դեպքում Բանկն իրավունք ունի իրականացնել Քարտի, այդ թվում նաև Թվային քարտի արգելափակմանն ուղղված միջոցառումներ՝ հնարավոր եղանակներով այս մասին ծանուցելով Քարտապանին (Կարճ հաղորդագրություններ, էլեկտրոնային փոստ և այլն):

11.4. Հաճախորդն իրավունք ունի հեռացնել Թվային քարտը Հավելվածից՝

11.4.1. Իրականացնելով Աջակցող սարքում Հավելվածով սահմանված համապատասխան գործընթացը,

11.4.2. Դիմելով Բանկին +374 10 605555 հեռախոսահամարով:

11.5. Նման դեպքերում Հաճախորդը Բանկին թույլատրում է մշակել և ավարտին հասցնել Թվային քարտով իրականացված անավարտ գործարքները:

12. Ընդհատումներ Վճարային ծառայությունների մատուցման ընթացքում

12.1. Թվային քարտի հասանելիությունը, օգտագործումը և սպասարկումը կախված են Հավելվածում առկա ծառայությունների ծավալից և Շարժական կապի օպերատորից: Բանկը չի հանդիսանում Հավելվածի կամ նմանատիպ ծառայությունների օպերատոր և չի վերահսկում դրանց գործունեությունը:

12.2. Բանկը Հաճախորդի հանդեպ պատասխանատվություն չի կրում ցանկացած հանգամանքի համար, որը կարող է ընդհատել, ստեղծել արգելքներ կամ այլ կերպ անդրադառնալ ցանկցած Թվային քարտի գործունեության վրա, ներառյալ Հավելվածի կամ շարժական կապի ծառայությունների, հեռահաղորդակցության անհասանելիությունը, ցանցի կախումը, բջջային կապի ծածկույթի սահմանափակումները, Հավելվածների կամ բջջային կապի խափանումները:

12.3. Թվային քարտի օգտագործումը ենթադրում է երրորդ անձանց կապուղիների միջոցով անձնական տվյալների էլեկտրոնային փոխանցում: Քանի որ Բանկի չի իրականացնում նման կապուղիների շահագործում և վերահսկում, Բանկը չի երաշխավորում տվյալների նման փոխանցման գաղտնիություն և անվտանգություն: Բացի դրանից, Հաճախորդի Աջակցող սարքի կարգաբերումները նապախես տրվում են Շարժական կապի օպերատորի կողմից:

12.4. Բանկն իրեն իրավունք է վերապահում սահմանափակել Հաճախորդի Աջակցող սարքով և ինտերնետի միջոցով Բանկին ուղղված կամ Բանկից ստացված անձնական կամ գաղտնի տեղեկատվության հաղորդակցումները՝ իր հայեցողությամբ կիրառելով անվտանգության հավելյալ միջոցառումներ կամ ստանդարտներ: Բանկը կարող է հաղորդակցություն իրականացնել կարճ հաղորդագրությունների կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

13. Պատասխանատվության սահմանափակումներ

13.1. Պայմանագրին համապատասխան Հաճախորդը համաձայն է, որ առանց լրացուցիչ տեղեկացման Հավելվածի և Թվային քարտի գործառույթները ինքնաշխատ կերպով կարող են թարմացվել: Բանկը կարող է ցանկացած պահի ընդունել Թվային քարտով նախատեսվող գործառույթների տեսակի և ծավալի ընդլայնման, կրճատման, դադարեցման կամ գրանցման գործընթացի փոփոխման որոշում: Հավելվածի ֆունկցիաների և հնարավորությունների արդիականացման իրավունքը չի նախատեսում Պայմանագրով նախատեսված փոփոխությունների իրականացում:

14. Այլ դրույթներ

14.1. Սույն Պայմանները հանդիսանում են Պայմանագրի լրացում և պետք է հաշվի առնվեն Պայմանագրի հետ համատեղ:

15. Փոփոխություններ սույն Պայմաններում

15.1. Բանկն իրավունք ունի Պայմանագրի փոփոխությամբ պայմանավորված վերանայել սույն Պայմանները: Պայմաններում փոփոխությունների մասին Բանկը Հաճախորդին տեղեկացնում է էլեկտրոնային փոստի կամ հաղորդակցության այլ միջոցներով:

15.2. Հաճախորդը հնարավորություն ունի ծանոթանալ սույն Պայմանների փոփոխությանը Աջակցող սարքի միջոցով: Եթե Հաճախորդը չի ընդունում սույն Պայմաններում իրականացված փոփոխությունները, ապա նա պարտավոր է Հավելվածում «Հեռացնել քարտը» հրահանգի միջոցով հեռացնել Թվային քարտը/քարտերը Հավելվածից կամ +374 10 605555 հեռախոսահամարով դիմել Բանկին, որի դեպքում Հաճախորդը Բանկին թույլատրում է մշակել Թվային քարտը Հավելվածից հեռացնելու պահին Թվային քարտով իրականացված ցանկացած անավարտ գործողություն:

16. Հաղորդակցում

16.1. Քարտը Հավելվածում գրանցելով՝ Հաճախորդը ամբողջությամբ ընդունում է սույն Պայմանները:

16.2. Հաճախորդը համաձայնվում է նաև Բանկից ստանալ Հավելվածի ծառայություններին առնվող ծանուցումներ և այլ հաղորդագրություններ հետևյալ եղանակներով՝

16.2.1. Էլեկտրոնային փոստ,

16.2.2. Կարճ հաղորդագրություններ,

16.2.3. Push ծանուցումներ,

16.2.4. Հավելվածով նախատեսված ծանուցման միջոցներ:

17. Լրացուցիչ դրույթներ

17.1. Հավելվածում հետ համատեղելի Աջակցող սարքերի աջակցության հետ կապված ցանկացած հարցի գծով Հաճախորդը պարտավոր է դիմել անմիջապես Ծառայություն մատուցողին:

17.2. Հավելվածի ծառայությունների սահմանափակումների, ինչպես նաև պահանջվող նվազագույն ծրագրային ապահովման և սարքավորումների հետ կապված տեղեկատվության ստացման համար Հաճախորդը պարտավոր է դիմել անմիջապես Ծառայություն մատուցողին:

17.3. Աջակցող սարքի, Հավելվածի և ինտերնետ ցանցի օգտագործման անվտանգության և գաղտնիության հետ կապված ցանկացած տեղեկատվության ստացման համար Հաճախորդը պարտավոր է ուղղակիորեն դիմել Ծառայություն մատուցողին: